



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
« **ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**»



*Ա. ՄԻՆԱՍՅԱՆ* Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«05» 06 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 54

**Ձեռնարկողը՝**

**«Արինչո» ՍՊԸ**

«Արագածոտնի մարզ, գ. Դավթաշեն»

**Գործունեությունը՝**

**Ակունքի փուֆի հանքավայրի հյուսիս-արևմտյան  
տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

«Արագածոտնի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝

*Վ. Սահակյան*

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 54

«05» 06 2017թ.

*Արագյան ՍԿ զրբապ*  
*Մկրտչյան*

**ՀՀ Արագածոտնի մարզի Ակունքի տուֆի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«Արինչո» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱԳ

հաշվետվություն. /Ա կատեգորիա/

Ակունքի տուֆի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, բնակավայրից հեռու՝ Ակունք գյուղից մոտ 1.0կմ հյուսիս-արևմուտք, 1974.0մ բացարձակ նիշով լեռնագագաթից 400մ հարավ-արևելք:

Տեղամասը գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով կապված է Ակունք գյուղի, ք. Աշտարակի(43կմ), իսկ վերջինս քաղաքամայր Երևանի (19կմ) հետ: Մոտակա բնակավայրերն են՝ Մաստարա, Կարմրաշեն, Պարտիզակ գյուղերը և Թալին քաղաքը(12կմ):

Ակունքի տուֆի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասի տարածքը գտնվում է 1890-1945մ բացարձակ բարձրությունների վրա:

Լեռնագրական տեսակետից տեղամասի տարածքը հարում է հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի հարավային լանջերին՝ Շամիրամի սարավանդի հարավ-արևելյան մասերին և բնութագրվում է բլրաալիքավոր ռելիեֆով: Բնորոշ են հանգած հրաբուխների կոնաձև բարձրացումները և առանձին լավային հոսքերի ողողամաշման-հրաբխային սարավանդները՝ կտրտված անջուր ձորակներով: Մակերևույթը խիստ քարքարոտ է և գերակշռող թեքությունը կազմում է 3-5°:

Հիմնական ջրագրական միավորը Ախուրյան գետն է, որը հոսում է խոր կիրճերով՝ հանքավայրից 38կմ արևմուտք: Գետային ցանցը թույլ է զարգացած և ներկայացված է սեզոնային բնույթի սելավային հոսքերի հեղեղատներով: Տեղամասի շրջանը գործնականում ջրազուրկ է, աղքատ աղբյուրներով: Հանքավայրի շահագործման ընթացքում ջրային ավազանի աղտոտում բացահանքի տարածքից չի նախատեսվում:

Շրջանում ներկայացված են տարբեր կլիմայական տիպեր, որը պայմանավորված է լեռնային կտրտված ռելիեֆով և բացարձակ բարձրությունների զգալի տատանումներով:



Երևակման բուն տարածքի կլիման չոր մերձարևադարձային է: Տեղումների միջին քանակը նախալեռնային գոտում տարեկան կազմում է 380-500մմ, իսկ բարձրադիր գոտում՝ 535-625մմ: Ամենացածր ջերմաստիճանը ձմռանը հասնում է մոտ  $-38^{\circ}\text{C}$ , ամռանը՝  $+40^{\circ}\text{C}$ : Օդի հարաբերական միջին խոնավությունը տարեկան 66% է:

Շրջանը աղքատ է բուսականությունից, անտառային ծածկույթը բացակայում է: Տարածքին բնորոշ է կիսաանապատային և լեռնատափաստանային լանդշաֆտներ՝ հացազգային և տարախոտա-հացազգային տարածմամբ:

Շրջանը բնորոշվում է աղքատ կենդանական աշխարհով: Հանդիպում են փոքր սպիտակափոր և տափակ սրընչակները, սովորական և սարահարթային դաշտամուկը, աղվեսի հայկական ենթատեսակը: Քանակապես գերակշռում են դողոշները, գորտերը, մողեսները և կան օձերի շատ տեսակներ:

Բուն հանքավայրի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի տեսակներ չեն արձանագրվել:

Տնտեսության հիմնական ճյուղերը գյուղատնտեսությունն է և բնական շինանյութերի լեռնահանքային արդյունաբերությունը: Ընդհանուր առմամբ գյուղը գրավում է 19.07կմ<sup>2</sup> տարածք, համայնքի բնակչությունը՝ 653 մարդ, 238 տնտեսություն:

Ակունքի հանքավայրն ու հետախուզված տեղամասն ունեն նույնատիպ երկրաբանական կառուցվածք, որը հաստատվել է կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում: Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի, միջին չորրորդականի հրաբխային և ժամանակակից փոխր-բեկորային առաջացումները:

Հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասի տուֆի 271370.0մ<sup>3</sup> ծավալով պաշարները հաստատվել են ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի ՕՀՊԳ կողմից՝ 28.12.2016թ. N11 արձանագրությամբ և B կարգով:

Հանքավայրի տուֆերը բավարարում են ԳՈՍՍ 4001-98 ու 22263-98-ի պահանջներին, որպես ուղիղ կտրվածքի քար և լցանյութ՝ բետոնի համար: Ուղիղ կտրվածքի քարի ելքը որոշվել է 36.9%:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ընդունված է 5430.0մ<sup>3</sup> տուֆազանգվածի մարվող պաշար: Իսկ մակաբացման ապարները՝ 98326.0մ<sup>3</sup> ծավալով, ներկայացված են փոխր ապարներով(11991մ<sup>3</sup>) և փուշտայով(86335.0մ<sup>3</sup>): Մակաբացման ապարների հեռացումը կկատարվի առանձին-առանձին:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- Առավելագույն երկարություն՝ 263.0մ,
- Առավելագույն լայնություն՝ 160.0մ,
- Առավելագույն խորություն՝ 19.0մ,
- Օտարման տարածքը՝ 2.7հա:

Ծառայման ժամկետը կազմելու է 50 տարի:

Տեղամասը մշակվելու է բաց եղանակով, առանց հորատապայթեցման:

Համաձայն բացահանքի մշակման ժամանակացույցային պլանին, լեռնային աշխատանքները նախատեսվում է կատարել 0.42մ բարձրությամբ հանքաստիճաններով՝ վերևից ներքև, կիսամեխանիզացված եղանակով, օգտագործելով ցածրաստիճանային CMP-026 մակնիշի քարհատ մեքենա:

Արդյունահանված ուղիղ կտրվածքի պատքարի իրացումը կկատարվի տեղում, սպառողի տրանսպորտային միջոցով:



Ելնելով հանքավայրի կլիմայական, լեռնատեխնիկական պայմաններից աշխատանքային ռեժիմն ընդունվում է 260օր/տարի, օրվա մեջ մեկ անգամ՝ 8 ժամ տևողությամբ հերթափոխով:

Հանքավայրի շահագործման ժամանակ օգտակար հանածոյի հաստաշերտի կորուստները որոշված են 2 խմբով: Դրանք կորուստներ են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում ու հատակում՝ 11.4% և շահագործական կորուստներ՝ արդյունաբերական պաշարների 1.3%:

Էլեկտրաէներգիայի մատակարարումը նախատեսվում է կատարել լիակազմ արտաքին տեղակայման տրանսպորտային ենթակայանից:

Շրջակա միջավայրի պահպանության համար վնասակար ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- սարքավորումները թույլատրել աշխատանքի միայն դրանց արտանետման գազերում վնասակար նյութերի թույլատրելի պարունակություն ապահովելու դեպքում, որի համար որոշ մեքենաների վրա դրվում են զտիչ սարքեր,
- փոշեառաջացման վերացման համար կիրականացվի աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կբարեկարգվեն գոյություն ունեցող ճանապարհները,
- նավթամթերքները պահվում են բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալներն ու մասերը կհավաքվեն հատկացված առանձին տեղում և կհանձնվեն որպես մետաղական ջարդոն,
- մակերևութային ջրերի հոսքը դեպի բացահանքի հատակ կանխարգելելու նպատակով, բացահանքի պարագծով կանցկացվեն խրամներ և արագահոսքեր,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

Տարածաշրջանում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Բացահանքի շահագործման ժամանակ առաջացած թափոնները կպահեստավորվեն արտաքին լցակույտում (0.7հա), տեղադրված հանքավայրի տարածքում: Հանքավայրի շահագործման 12-րդ տարուց սկսած, մակաբացման ապարներն ու թափոնները կտեղափոխվեն բացահանքի մշակված տարածություն՝ 1918մ նիշ ունեցող և նրանից ցած ընկած հորիզոններում, ներքին լցակույտերում: Կիրականացվի ներքին լցակույտի մակերևույթի ռեկուլտիվացիա.

- մակաբացման ապարների փոում և հարթեցում-2.4հա,
- նախկին լցակույտեր՝ 0.3հա,
- արտադրական հրապարակի տարածքի վերականգնում՝ 0.1հա,
- բացահանքի սպասարկող ավտոճանապարհի հարթեցում՝ 0.2հա:

Աշխատանքների ընդհանուր ծավալը կլինի 3.0հա, որի համար անհրաժեշտ խոշորացված ծախսը կկազմի 1170.4 հազար դրամ:

Ամփոփելով վերոշարադրյալը, նախատեսված մի շարք բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու



ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ (կազմվել են նաև վերջիններիս արձանագրությունները), որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արինչո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Ակունքի տուֆի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:



Մասնագետ՝

Ն. Ռոստոմյան